ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

18 հոկտեմբերի 2017 թ. թիվ 13 /1746/

33. ՀՀ ԳԱԱ Նախագահության աշխատակազմի կառուցվածքում կիրառական ծրագրերի բաժին ստեղծելու մասին

Համաձայն 2017 թ. ՀՀ ԳԱԱ տարեկան ընդհանուր ժողովի որոշման, հաշվի առնելով ՀՀ-ում կիրառական հետազոտությունների ակտիվացման գործընթացը՝ ՀՀ ԳԱԱ Նախագահությանը հանձնարարված էր ավարտել իր աշխատակազմում ինովացիոն քաղաքականությունը իրագործող միավորի ստեղծման աշխատանքները: Ստեղծվող միավորի խնդիրներն են՝ ՀՀ ԳԱԱ կազմակերպություններում կատարվող կիրառական բնույթի գիտական հետազոտությունների արդյունքների մոնիտորինգի իրականացումը, այլ գերատեսչություններին ներկայացնելու համար այդ հետազոտությունների արդյունքների ներդրման համար պատրաստ լինելու մակարդակի ուսումնասիրումը, արդյունքների կիրառման նպատակով շահագրգիռ կազմակերպությունների որոնումը, այդ կազմակերպությունների հետ կապի հաստատումը:

Ելնելով վերոհիշյալից ՀՀ ԳԱԱ Նախագահությունը որոշում է.

ՀՀ ԳԱԱ Նախագահության աշխատակազմի կառուցվածքում ստեղծել կիրառական ծրագրերի բաժին:

ՀՀ ԳԱԱ ՆԱԽԱԳԱՀ Ռ.Մ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ-ՔԱՐՏՈՒՂԱՐ Հ.Հ.ՄԱԹԵՎՈՍՅԱՆ